Ես հաջողել եմ, շարունակի՛ր հաջողությունը

Արևիկ Աբովյան

Նունե Սարուխանյան

Սյուզաննա Հովսեփյան

Գոհար Ղարիբյան

Լուսինե Եալբանդյան

***Արևիկ Աբովյանը** անասնաբուժական գիտությունների թեկնածու է, դոցենտ, 2019 թվականից Հայաստանի ազգային ագրարային համալսարանի անասնաբուժական բժշկագիտության և անասնաբուծության ֆակուլտետի դեկան:*

«Երբեք չընկրկել, փորձել և առաջ գնալ»

«Ասում են՝ անասնաբույժները ֆանատ են, ես համաձայն եմ, քանի որ շատ ենք սիրում մեր աշխատանքը,- ասում է Արևիկ Աբովյանը և հավելում,- իրականում ամեն ինչի հիմքում էլ սերն է, պետք է սիրես, որ կարողանաս աշխատել ու հաջողությունների հասնել»:

Պատմում է, որ մասնագիտության ընտրության հարցում մեծ ներդրում է ունեցել հայրը, որը նույնպես անասնաբուժության ոլորտի նվիրյալներից էր:

«Հայրս իմ բուհ ընդունվելու տարիներին իր ատենախոսությունն էր գրում: Մեզ միշտ իր հետ տանում էր ֆերմաներ, ծանոթացնում անասնաբույժի աշխատանքին, մեր տանը միշտ իր ընկերների հետ մասնագիտական թեմաներ էին քննարկում, ու, անկախ մեր կամքից, այդ ամենի կենտրոնում էինք լինում: Հայրս երբեք չէր պարտադրում, բայց այդ զրույցներն իրենց ազդեցությունը թողեցին»,- պատմում է տիկին Աբովյանը և նշում, որ թեև գյուղատնտեսական բուհ ընդունվելու որոշումն ինքնաբերաբար է եղել, բայց, անկասկած, հոր օրինակով էր պայմանավորված:

«Ինձ համար գյուղատնտեսական կենդանիները, ֆերման կամ այս ֆակուլտետում ուսանելը, այո՛, երազանք չէին, բայց սովորելու ընթացքում հետաքրքրությունս աստիճանաբար ավելանում էր, նորանոր շերտեր էի բացում և նվիրվում մասնագիտությանս»,- ասում է տիկին Աբովյանը՝ նշելով, որ երբ բացահայտում ես ոլորտն ամբողջությամբ, սկսում ես սիրել այն, իսկ երբ սիրում ես, ավելի ես կարդում, պրպտում, նոր հետաքրքրություններ գտնում…

Դրա հետ մեկտեղ հիշում է, որ իր ուսանելու տարիներին դժվար շրջան էր պետության համար, 90-ականների սկիզբն էր, և գործնական աշխատանքների մեծ բաց կար բուհում:

«Արդեն երեք տարի է՝ ինչ ինձ են վստահել ղեկավարել ֆակուլտետը, և այսօր փորձում եմ իրականացնել այն, ինչի մասին առաջ՝ որպես ուսանող, կարող էի միայն երազել: Նայում եմ ուսանողի աչքերով, փորձում անել առավելագույնը, որ ստեղծենք այն միջավայրը, որտեղ ուսանողը գիտելիքի հետ մեկտեղ նաև գործնական աշխատանքի փորձ ու հմտություններ ձեռք կբերի»,- նշում է Արևիկ Աբովյանը և գոհունակությամբ հավելում, որ այս տարվանից ուսանողները մեկ ամբողջ կիսամյակ արտադրական պրակտիկայի հնարավորություն կունենան, որը կօգնի նրանց առավելագույնս յուրացնել մասնագիտությունը և արդեն պատրաստի մասնագետ դարձած մտնել աշխատաշուկա:

Նրա խոսքով՝ մասնագիտության մեջ հաջողելու կարևոր նախապայմանը գործնական աշխատանքից երբեք չհեռանալն է: «Այո՛, դասավանդել եմ, բայց նաև գործնական աշխատանք եմ կատարել, քանի որ շատ եմ սիրում իմ նեղ մասնագիտացումը»:

Արևիկ Աբովյանը նշում է, որ չնայած անասնաբուժության ոլորտում կին մասնագետներ քիչ կան, բայց աղջիկների հետաքրքրությունն այդ ոլորտի նկատմամբ աստիճանաբար ավելանում է:

«Հետաքրքրություն կա, բայց գնում են ընտանի կենդանիների ոլորտ, անգամ սեփական կլինիկաներն են բացում: Բայց, օրինակ՝ ունեինք իրանահայ ուսանողներ, աղջիկներ, որոնք հաջողությամբ աշխատում են մեծ ֆերմաներում, անգամ հետ չգնացին ուսանելուց հետո՝ բնակություն հաստատելով Հայաստանում»,- նշում է տիկին Աբովյանը:

Հայրս միշտ ասում էր շատ հայտնի խոսք մեր ոլորտում՝ «Բժիշկները մարդկանց են փրկում, անասնաբույժները՝ մարդկությանը»: Առավել խորությամբ եմ այսօր հասկանում այդ ամենի իմաստը ու ցավում եմ, որ ինքը չի տեսնում իմ հաջողությունը:

«Մեր ոլորտում քիչ են կանայք, բայց ինչքան էլ ասեն, թե անասնաբուժությունը կնոջ մասնագիտություն չէ, եթե կա ցանկություն, ապա հաջողությունն անխուսափելի է: Իմ հաջողությունը նաև ոլորտում կայացած շրջանավարտներն են: Միշտ խրախուսում եմ ուսանողներին օգտվել ընձեռած հնարավորությունից, երբեք չընկրկել, փորձել և առաջ գնալ...»

***Նունե Սարուխանյանը** ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտի ագրոնոմիական, այնուհետև՝ տնտեսագիտական ֆակուլտետը: Գյուղատնտեսական գիտությունների թեկնածու է, «Կանաչ արահետ» ՀԿ նախագահ:*

«Ունենալ մեծ նպատակ ու հավատալ դրա իրականացմանը»

«Սերը բնության հանդեպ միշտ է եղել, սկսած մանկությունից: Մայրս միշտ պատմում էր, որ երեխաներից ամենաշուտը ես էի արթնանում, որ գնամ այգի ու տեսնեմ՝ կակաչները ոնց են բացվում... Ինձ համար տիկնիկներին միշտ փոխարինել են ցնցուղը, բահը, բույսը... դա էր իմ հետաքրքրությունը»,- ասում է Նունե Սարուխանյանը:

Պատմում է, որ տնեցիները տխրել են, երբ իմացել են, որ որոշել է գյուղատնտես դառնալ. «Մտածում էին, որ իրենց աղջիկը բժիշկ կամ մանկավարժ պետք է դառնա, քանի որ դպրոցում բոլոր առարկաներն էլ շատ լավ էի սովորում,- նշում է նա և ժպիտով հիշում,- իմ ամենասիրելի առարկան բուսաբանությունն էր, ինձ դպրոցում ասում էին՝ Ջավահյանի տեղակալ (ուսուցչի ազգանունն է - խմբ.): Այդ տարիներին չկար լրացուցիչ գրականություն, բայց ես միշտ պրպտում էի, ամսագրեր գտնում այս թեմաներով»:

«Մասնագիտության ընտրության ժամանակ երբեք չեմ մտածել ֆինանսական կողմի մասին, մինչդեռ այսօր այն ամենապահանջված, բարձր վարձատրվող մասնագիտությունն է: Հայրս այն ժամանակ ասում էր՝ աղջիկը չարժի սապոգները հագնի, դաշտերն ընկնի... Բայց ես գիտեի, որ սա է իմ ճանապարհը: Միշտ համարձակ եմ եղել, ուսանելիս առաջինը ես էի քննություններին պատասխանում ու միշտ աշխատել եմ ինձ վրա, մինչև հիմա էլ վերապատրաստման բազմաթիվ կուրսեր եմ անցնում, սա, կարծում եմ՝ կարևոր է յուրաքանչյուր ոլորտում»:

Իմ խորհուրդն է բոլոր երիտասարդներին՝ չկենտրոնանալ փոքր խնդիրների վրա, ունենալ մեծ նպատակ ու հավատալ դրա իրականացմանը: Այդպես հիմնեցի իմ խորհրդատվական կենտրոնը: Զրո գումար ունեի այդ ժամանակ, բայց գիտեի, որ անպայման իրագործելու եմ իմ նպատակը:

Այսօր «Կանաչ ուսուցման կենտրոններ» ունենք Տավուշի և Կոտայքի մարզերում, ավարտում ենք աշխատանքները նաև Շիրակի մարզում: Իմ նպատակն է, որ այս կենտրոնները լինեն բոլոր մարզերում, և մարդիկ գյուղատնտեսական լիարժեք խորհրդատվություն ստանալու հնարավորություն ունենան:

«Պետք է հավատալ սեփական ուժերին. գյուղատնտեսությունում կանայք մեծ անելիք ունեն: Տեսեք՝ պատահական չէ, որ կանաչ, օրգանական գյուղատնտեսությունում հատկապես մեծ թվով կանայք են ներգրավված: Կանայք զգում են բույսը, խնամքի, պայքարի միջոցներ գտնում, ու այդ բոլոր գործընթացներում, միևնույն է՝ մեր աչքի առաջ միշտ մեր երեխաներն են, ամուսինը, ընտանիքը, այսինքն՝ առողջ, օգտակար սնունդ են ձգտում ստեղծել»:

***Գոհար Ղազարյանը** Հայաստանի ազգային ագրարային համալսարանի շրջանավարտ է, գինեգործ, «ՎայնԳոգ» վարդագույն գինու ստեղծող:*

«Պեպք է ինքդ քեզ հարցնես՝ իսկ ես ինչ եմ ուզում»

«Չէի մտածում, որ իմ կյանքում այսպիսի շրջադարձ տեղի կունենար, և ես կսկսեի գինեգործությամբ զբաղվել»,- ասում է Գոհարը, որը նկարչական հոսքում միջնակարգ կրթություն ստանալուց հետո մտածում էր Գեղարվեստի ակադեմիա ընդունվել, բայց մի օր փոխում է որոշումը և ընդունվում Ագրարային համալսարան:

«Ընդունվեցի պարենամթերքի տեխնոլոգիաների ֆակուլտետի «Կաթ, կաթնամթերքի տեխնոլոգիա» բաժինը, բայց իմ մտքում գինեգործությունն էր, ուղղակի այն ժամանակ 17 տարեկան էի, և «ԻՎԻԷն» գինու ակադեմիայի (EVN Wine academy) համար տարիքս չէր ներում»,- պատմում է Գոհարը, որին երկրորդ կուրսում հնարավորություն է ընձեռվում Եվրոպական միության «Էրազմուս» ծրագրի շրջանակներում Իտալիա մեկնել ու ուսումնասիրել սննդի տեխնոլոգիան:

«Երևի պատահական ոչինչ չի լինում, քանի որ հենց այնտեղ սկսեցինք գինեգործություն ուսումնասիրել, շատ հետաքրքիր էր ինձ համար, հատկապես որ ոչինչ չգիտեի այդ ոլորտի մասին: Այնտեղ ուսանելը նաև հրաշալի հնարավորություն էր կայանալու, ինքնուրույնություն ձեռք բերելու համար»:

Գոհարը պատմում է, որ Հայաստան վերադառնալուց հետո տեղեկանում է «ԻՎԻԷն» ակադեմիայի ամառային դասընթացների մասին, դիմում է և սկսում խորությամբ ուսումնասիրել գինեգործությունը: Դասընթացներից հետո հաջողությամբ հանձնում է քննությունները և արժանանում նաև փոքր դրամաշնորհի, որն էլ օգնում է Գոհարին հիմնելու սեփական բիզնեսը:

«Որոշեցի շուկա մտնել նորությամբ, ընտրեցի «Հաղթանակ» սորտի խաղողը, որից հիմնականում միայն կարմիր գինիներ են պատրաստում, իսկ մենք առաջին անգամ վարդագույն գինի ստացանք: Սա իմ փոքրիկ հաղթաթուղթն է, և արդեն երեք տարի է՝ ինչ շուկայում ենք՝ «ՎայնԳոգ» անվամբ», - պատմում է Գոհարը և նկատում, որ չնայած շատերը գինու ապրանքանիշը նկարիչ Վան Գոգի անվան հետ են նույնականացնում, այն իրականում՝ «վայն»՝ գինի և «Գոգ»ն էլ իր անվան կրճատ տարբերակն է: «Անգամ գինու վրա պատկերված աղջկան ինձ հետ եմ նմանեցնում, որ գուցե առաջին հայացքից կանացի է, նուրբ, բայց հաղթանակների ձգտող»:

Գինին դեռևս փոքր քանակությամբ է արտադրվում և հիմնական սպառումը Հայաստանում գտնում: Գոհարը նշում է, որ փոքր բիզնեսի համար, իրականում, շատ դժվար էր շուկայում կայանալը, բայց երբ ջանք ես գործադրում, անհնար է չհաջողել. «Պետք է շատ աշխատել, երբ փոքր է բիզնեսդ, դու և՛ տնօրեն ես, և՛ առաքիչ, և՛ արտադրող»,- ժպտում է նա ու ավելացնում, որ հիմա էլ նոր գաղափարներ ունի, բայց ինչպես «Հաղթանակի» դեպքում, այս անգամ էլ է ուզում յուրօրինակ մի բան առաջարկել. «Իսկ երազանքը, իհարկե, սեփական այգի ու գործարան ունենալն է, դե, ամեն բան առջևում է»...

«Առաջին հերթին պետք է հստակ նպատակ ունենալ, իմանալ, թե ինչ ես ուզում, կապ չունի՝ կլողաս, կփորես, կթռչես, հիասթափության և ուրախության պահեր էլ կլինեն, բայց պետք է անպայման առաջ գնալ... Երկրորդը՝ պետք է լսել քո ներքին ձայնը, ցանկությունները, սա նույնպես շատ կարևոր է, քանի որ էական չէ, թե ով ինչ ասաց կամ մտածեց, պետք է ինքդ քեզ հարցնես՝ ե՛ս ինչ եմ ուզում: Ու նաև պետք է շատ սիրել, եթե կրակ չվառվեց, ուրեմն քոնը չէ, երբ խոսք է գնում գինու մասին, իմ մեջ ամեն բան ուղղակի բոցավառվում է, ինչպես գինի ըմպելու ժամանակ է լինում...»



***Լուսինե Նալբանդյանը** ագրոէկոլոգ է,*
«ՕՌՎԱԿՕ» ՓԲԸ համահիմնադիր և տնօրեն,
«Օրգանական Հայաստան» ասոցիացիայի նախագահ:

«Պետք է համառ լինես, նաև հաջողակ, որ ճիշտ, քո գաղափարին հավատացող մարդկանց հանդիպես»

«Մանկուց շատ եմ սիրել բնությունը ու միշտ մտահոգվել եմ բնության պահպանության հարցերով, ուստի առանց երկմտելու գործերս տվեցի ԵՊՀ-ի էկոլոգիայի բաժին: Երբ հայտը լրացնում էի, երկու ազատ տեղ էր մնացել, ու ինձ խորհուրդ տվեցին՝ դատարկ չթողնել ու Ագրարային համալսարանը նույնպես նշել»,- պատմում է Լուսինեն և անկեղծորեն խոստովանում, որ բավական ծանր է տարել, երբ պարզվեց, որ Ագրարային համալսարան է ընդունվել: Ասում է՝ այն ժամանակ հստակ որոշում է կայացրել, որ կես կիսամյակ հետո գործերը կտեղափոխի ԵՊՀ:

«Բայց մեկ կիսամյակ հետո այնքան սիրեցի բուհն ու իմ մասնագիտությունը, որ այդ հարցը դուրս եկավ օրակարգից: Անվանական կրթաթոշակ ստացա, մասնագիտական փորձեր սկսեցինք անել համալսարանին կից ջերմոցում, ճիշտ է՝ պայմանները անհամեմատելի էին այսօրվա հետ կիսաջարդված ապակիներով խարխուլ շինություն էր, բայց լուրջ փորձեր էինք անում, բույսեր աճեցնում...»- պատմում է Լուսինեն:

11 տարի առաջ Լուսինեի մոտ «ՕՌՎԱԿՕ» ընկերություն ստեղծելու գաղափարն է ծագում: Նրա խոսքով, միշտ փնտրել է լուծումներ փակ շղթայի կառուցման համար, երբ մեկ արտադրության թափոնը հիմք է մյուսի համար, և դա իրեն հաջողվել է: «ՕՌՎԱԿՕ»-ի գործունեությունը թափոնների վերամշակման հետ է կապված: Ընկերությունն արտադրում է էկոլոգիապես մաքուր և կենսաբանորեն ակտիվ օրգանական պարարտանյութ, որը ստացվում է կալիֆորնիական կարմիր որդերի և միկրոօրգանիզմների միջոցով օրգանական թափոնների վերամշակման արդյունքում:

«Թափոնների վերամշակումն ինձ համար միշտ երազանք է եղել: Երբ տեսնում էի, օրինակ՝ թե ոնց էին ծաղկի խանութներում տերևները հավաքում ու թափում, ցավ էի ապրում, քանի որ դա արժեքավոր ռեսուրս է, որը թափվում ու դառնում է աղբ: Մասնագիտական երազանքս հնարավոր դարձավ կյանքի կոչել հայ և նորվեգացի մտահոգ մարդկանց և կազմակերպությունների աջակցության շնորհիվ: Եվ այսօր, գուցե ոչ ամբողջությամբ, բայց ամեն դեպքում մենք ունենք գործարան, որը զբաղվում է օրգանական թափոնների վերամշակմամբ, և այդ տեսանկյունից, ես կարծում եմ, որ երջանիկ մարդ եմ: «ՕՌՎԱԿՕ»-ն ֆերմերին տալիս է հնարավորություն՝ հրաժարվելու վնասակար քիմիկատներից՝ փոխարենն օգտագործելով օրգանական, բնական պարարտանյութեր, և տալու վիտամիններով հարուստ, անվտանգ արտադրանք»:

Խոսելով ընկերության թիմի մասին, Լուսինեն նկատում է, որ իհարկե ղեկավարելը բարդ է, բայց սիրով է անում. «ՕՌՎԱԿՕ»-ն ընտանիքի պես է, ու անցյալ տարի ևս մեկ անգամ ապացուցեցինք, որ ամուր թիմ ենք: Համավարակից ու պատերազմից հետո ֆինանսական լուրջ դժվարություններ ունեինք, բայց բոլորը մեկ մարդու պես կազմակերպության կողքին կանգնեցին, ու միասին հաղթահարեցինք ճգնաժամը»:

Լուսինեի կարծիքով, գյուղատնտեսության նկատմամբ հետաքրքրությունը տարիների ընթացքում աճել է. գրեթե ամեն շաբաթ տարբեր կազմակերպություններից լավ ագրոնոմ են հարցնում, և՛ աշխարհում, և՛ Հայաստանում ոլորտը զարգանում է, և երբ խոշոր ներդրում է արվում, մասնագետների պահանջն էլ աճում է:

«Մենք էլ տարբեր դասընթացներ ենք իրականացնում, մարդկանց հետաքրքրությունը նախորդ տարիների համեմատ անհամեմատ մեծ է: Ցանկանում ենք նաև դպրոց հիմնել»...

Բացի գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցման խորհրդատվության բազմամյա փորձից, Լուսինեն համակարգել է կայուն օրգանական գյուղատնտեսության, ագրոէկոտուրիզմի, կենսաբազմազանության պահպանության, համայնքային զարգացման ծրագրեր: Այսօր էլ գաղափարներ ունի՝ ուղղված ոլորտին, կայուն, օրգանական գյուղատնտեսությանը, հավելյալ արժեք ստեղծելուն...

Համոզված է՝ աշխարհում ամեն բան փոխկապակցված, փոխպայմանավորված է, և բնությունն ամենացայտուն կերպով է դա ցույց տալիս:

«Հայտնի օրենք է՝ բնության պարտքերը պետք է վերադարձնել, այն էլ՝ տոկոսներով: Մենք միայն ուզում ենք, բայց չենք հասկանում, որ վերադարձնելու պահն էլ է գալու: Ընտրության հարց է նաև՝ արդյոք կկարևորե՞ս, թե սերունդներին ինչ կթողնես, կապահովվի՞ արդյոք վերականգնողական ֆունկցիան, արդյոք հավատարիմ կմնա՞ս չվնասելու սկզբունքին»...

«Կարծում եմ՝ նպատակին հասնելու համար պետք է համառ լինես, նաև հաջողակ, որ ճիշտ մարդկանց հանդիպես, քեզ պես մտածող, քո գաղափարին հավատացող: Այնպես, ինչպես գարնանային հյութաշարժի սկիզբը կայուն աճի սկիզբն է, այնպես էլ մեզ շրջապատող աշխարհում հենց սկզբից պետք է ամեն բան այնպես անել, որ այն լինի ավելի կայուն, առողջ ու անվտանգ, դա է ինձ համար ամենակարևորը: Միշտ պետք է մտածել, թե ինչ անես, որ կայունություն ու ներդաշնակություն ապահովես քո և շրջակա աշխարհի միջև ...»

***Սյուզաննա Հովսեփյանն** աշխատում է «Քեյթ ընդ Ջի գրուպ» ընկերությունում որպես գլխավոր ագրոնոմ: Խորհրդատվություն է տրամադրում պետական և մասնավոր ընկերություններին ելակի և այլ մշակաբույսերի հիդրոպոնիկ աճեցման վերաբերյալ. դասավանդում է Արգենտինայի համալսարանում:*

«Իմ սերը բուսաբանության հանդեպ երբեք չի ընդհատվել»...

«Փոքր տարիքում, որ հարցնում էին, թե ինչ եմ դառնալու, ասում էի՝ բուսաբան: Բույսեր շատ էի սիրում: Մեր տանը մանրադիտակ ու տարբեր խոշորացույցներ կային, և ես ժամերով կարող էի տարբեր բույսեր ուսումնասիրել»,- պատմում է Սյուզաննան և նշում, որ մի օր, երբ թերթում տեսնում է Ագրարային համալսարանի «Մշակաբույսերի սելեկցիա և գենետիկա» բաժինը, հստակ որոշում է կայացնում, որ հենց այնտեղ է սովորելու:

«Առաջին կուրսում բուսաբանության դասերին աչքերս ոգևորությունից փայլում էին, հատկապես, երբ տրամաբանական հարցեր էին տալիս... Համալսարանում ունեցել եմ շատ լավ դասախոսներ, այդ գիտելիքն ինձ հետագայում՝ Գերմանիայում ուսանելու տարիներին էլ է օգնել, նույնը նաև դպրոցում. իմ սերը բուսաբանության հանդեպ երբեք չի ընդհատվել: Ուսուցիչների շնորհիվ է նաև, որ 17 տարեկանում գիտեի, թե ինչ եմ ուզում դառնալ»:

Ավարտելով Հայաստանի ազգային ագրարային համալսարանի մագիստրատուրան՝ Սյուզաննան ընդունվում է ասպիրանտուրա, սակայն անավարտ թողնելով այն՝ որոշում է գնալ արտադրական ոլորտ, իսկ հետո կրկին շարունակում է ուսումը արդեն Գերմանիայում ՝ ավարտելով այնտեղ երկրորդ մագիստրատուրան:

Մասնագիտական աշխատանքի առաջին քայլերը Սյուզաննան արել է «Հայկական բերքի առաջմղման կենտրոնում», որտեղ որոշել է ելակի մշակությամբ զբաղվել: Ընկերությունն իր առաջարկին ընդառաջել է, Հոլանդիայից մասնագետներ է հրավիրել. «Ես էլ սկսեցի կարդալ, սովորել, ու մինչև այսօր էլ այդպես է»,- պատմում է Սյուզաննան և խոստովանում, որ սովորելու վրա երբեք չի խնայել ոչ ժամանակ, ոչ էլ գումար:

«Ոմանք ասում էին՝ այդ գումարով կարող էիր մեքենա գնել, բայց ես, միևնույն է, նախընտրել եմ գիտելիքը, որն ամենապատասխանատու պահերին միշտ ինձ օգնել է»:

Այսօր պատրաստվում է իր գիտական թեզը գրել ելակի մասին ու այդ ուղղությամբ արդեն բավական աշխատանք է արել: Մասնագիտական ծրագրերի հետ մեկտեղ, մեկ այլ նպատակ էլ ունի. «Մանկուց շատ եմ սիրել նաև նկարել, բանաստեղծություններ եմ գրել, անգամ մտածել եմ լրագրող դառնալու մասին: Իմ ցանկությունն է ելակի մասին մի հեքիաթ գրել՝ իմ նկարազարդումներով»,- ասում է Սյուզաննան և հավելում, որ այդ գիրքը կամփոփի իր բոլոր նախասիրությունները:

Պատմում է, որ ուսանելու սկզբնական շրջանում որոշակի դժվարություններ է ունեցել՝ քաղաքից լինելու պատճառով. «Իմ համակուրսեցիները, որոնք մարզերից էին, փոքրուց մոտ են եղել գյուղատնտեսությանը, շատ ավելին գիտեին մշակաբույսերի մասին, իսկ ես շատ բաներ նոր էի բացահայտում, օրինակ՝ այս կամ այն բույսը ոնց է աճում, ինչ տեսք ունի... Շատերն ասում էին՝ այո՛, լավ ես սովորում, բայց երևի դասախոս դառնաս, հո չես գնալու դաշտ... Կամ կարող էին ասել, որ լավ ես աշխատում, բայց լավ կլիներ՝ տղա լիներիր: Իրենց պատկերացմամբ՝ ագրոնոմը պետք է տղա լինի: Իսկ ես, հակառակն ապացուցելու համար, պարկեր էի շալակում, ուզում էի ցույց տալ, որ ես էլ կարող եմ, ծանր աշխատանքից չեմ վախենում...»- անկեղծանում է Սյուզաննան:

Նրա համոզմամբ, ոլորտում հաջողելու համար նախ՝ պետք է պատկերացնել աշխատանքի էությունը և պատրաստ լինել ինչ-որ հարցերում հրաժարվելու սեփական հարմարավետությունից . «Եթե մարդը պատրաստ է իր օրն սկսելու, օրինակ՝ առավոտյան ժամը 6-ին, որպեսզի ջուրը միացնի կամ ինչ-որ չափում իրականացնի՝ հասկանալու համար, թե ինչ է կատարվել բույսի հետ, պատրաստ լինի նաև, որ մի օր շալվարը հողոտվելու է, ձեռքերը վնասվեն..., եթե այդ մարդուն դրանք չեն խանգարում, իսկ ինձ այս ամենը երբեք չի խանգարել, ապա պետք է առաջ շարժվի, իր վրա աշխատի, շատ կարդա ու համոզված լինի, որ տաշած քարը գետնին չի մնա»:

Սյուզաննայի կարծիքով՝ ագրոնոմն ամենօրյա մարտահրավերների մեջ է. «Այսօր տերևը դեղնեց, ելակը այն չէ, կամ նոր միջատ է եկել... անընդհատ խնդիր ես լուծում: Ու ոչ միայն բույսի հետ ես աշխատում, կարևոր է նաև ամենօրյա ուշադրությունն աշխատակիցների հանդեպ: Չէ՞ որ այդ մարդիկ են քո ձեռքերը, ու պետք է մարդկային լավ հարաբերություններ ստեղծել, հավասար վերաբերմունք պահպանել՝ ներդաշնակ միջավայր ունենալու համար, որպեսզի ներքին խնդիրներ չլինեն: Այդ ամենից գործը միայն շահում է»...

«Բույսի հետ պետք է սիրով աշխատել, էներգիա փոխանցել բույսին, իսկ հոգատարությունը հաճախ կարող է պարարտանյութերին էլ փոխարինել... Ջերմատուն պետք է ժպիտով մտնել, ճանաչել ու օգնել բույսին, որ ինքը լավ ապրի... Ինձ համար դա ոչ միայն շատ բարի ու կարև որ գործ է. ես սիրում եմ բույսը, բույսը կյանք է...»

Եվրոպական միության մասին

Եվրոպական միության անդամ պետությունները որոշել են միմյանց հետ կապել իրենց «նոու-հաուն», ռեսուրսները և ճակատագրերը: Նրանք միասին կառուցել են կայունության, ժողովրդավարության և կայուն զարգացման գոտի ՝ պահպանելով մշակութային բազմազանությունը, հանդուրժողականությունը և անհատական ազատությունները: Եվրոպական միությունը հանձն է առել իր նվաճումներն ու արժեքները կիսել իր սահմաններից դուրս գտնվող երկրների և ժողովուրդների հետ:

EU-GAIA ծրագրի մասին

ԵՄ Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնությունը Հայաստանում (EU-GAIA) ծրագիրը ֆինանսավորվում է Եվրամիության կողմից (9,7 միլիոն եվրո) և համաֆինանսավորվում է Ավստրիական զարգացման համագործակցության (2 միլիոն եվրո) կողմից: Ծրագիրն իրականացվում է Ավստրիական զարգացման գործակալության և Հայաստանում ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից: Ծրագրի կառավարության գործընկերն է ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը: EU- GAIA ծրագիրն աջակցում է կայուն, ներառական, նորարարական և շուկայահեն ագրոբիզնեսի զարգացմանը, մասնավորապես՝ Հայաստանի հյուսիսային մարզերում՝ Շիրակում, Լոռիում և Տավուշում: Ծրագիրն իրականացվելու է առաջիկա երեք տարվա ընթացքում: Ծրագրով ընտրված են հետևյալ վեց գյուղատնտեսական արժեշղթաները՝ մրգերը, հատապտուղները, բանջարեղենը, հատիկաընդեղեն մշակաբույսերը, խոտաբույսերը և ոչխարաբուծությունը:

Այս հրապարակումը պատրաստվել է Եվրոպական միության և Ավստրիական զարգացման համագործակցության ֆինանսական աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում Հայաստանում Կանաչ գյուղատնտեսության նախաձեռնություն ծրագիրը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության և Ավստրիական զարգացման գործակալության տեսակետները: